Մարջանյանը, Հայկական ՍՍՌ Առողջապահության ժողովրդական Կոմիսար ընկ. Գ. Ղևոնդյանը, Լուսավորության ժողովրդական Կոմիսարի Տեղակալ ընկ. Ա. Ղազախեցյանը:

Ընկ. Ս. Կարապետյանը պատգամավորներին ու հյուրերին ծանոթացրեց Սովետական Հայաստանի նվաճումներին արդյունաբերության, գյուղատնտեսության ու կուլտուրայի բնագավառում:

Ընդունելության ժամանակ ելույթ ունեցած արտասահմանյան հայկական գաղութների ներկայացուցիչները նշում էին Սովետական Հայաստանի հսկայական նվաճումները ժողովրդական տնտեսության, շինարարության, կուլտուրայի, արվեստի, ժողովրդական կրթության, առողջապահության բնագավառում և այլն:

Պատգամավորներն ու հյուրերը բազմաթիվ հարցեր տվեցին ինչպես Սովետական Հայաստանի կյանքին վերաբերող, այնպես էլ արտասահմանի հայկական գաղութների հետ կապված, որոնց ընկ. Ս. Կարապետյանը մանրամասն պատասխաններ տվեց:

Արտասահմանի հայկական գաղութների մի շարք ներկայացուցիչներ Հայկական ՍՍՌ կառավարության առաջ միջնորդություն հարուցեցին, որպեսզի հնարավորություն տրվի հայկական գաղութներից երիտասարդության առավել ընդունակ մասը ուղարկել Սովետական Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորելու համար:

Հայկական ՍՍՌ Ժողկոմսովետի Նախագահի Տեղակալ ընկ. Ս. Կարապետյանը խոստացավ այդ հարցը քննության առնել:

Ընդունելության ժամանակ ելույթներ ունեցան նաև Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահ ընկ. Սիմակ Սահակյանը, Ժողկոմսովետի Նախագահի Տեղակալ ընկ. Հ. Մարջանյանը, Առողջապահության ժողովրդական Կոմիսար ընկ. Գ. Ղևոնդյանը և Լուսավորության ժողովրդական Կոմիսարի Տեղակալ ընկ. Ա. Ղազախեցյանը:

(«Սովետ. Հայաստան», 27 հունիսի, 1945 թ., № 128 (7381))

## ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՀՍՍՌ ԺՈՂԿՈՄՍՈՎԵՏԻՆ ԿԻՑ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴՈՒՄ

Հայկական ՍՍՌ Ժողկոմսովետին կից Հայ եկեղեցու Գործերի Խորհրդի նախագահ Ս. Ն. Հովհաննիսյանն ընդունեց Համազգային Եկեղեցական Ժողովին ժամանած հոգևորական պատգամավորներին: Պատգամավորության մեջ էին Տանն Կիլիկիո Կաթողիկոս Տ. Գարեգին Ա-ը, Երուսաղեմի Պատրիարք Տ. Կյուրեղ Բ-ը, Կ. Պոլսի պատրիարքական տեղապահ Տ. Գևորգ արքեպիսկոպոսը, Լիբանանի առաջնորդ Տ. Արտավազդ արքեպիսկոպոսը, Եգիպտոսի առաջնորդ Տ. Մամբրե եպիսկոպոսը և ուրիշները:

Ընդունելությանը ներկա էր ՍՍՌՄ Կրոնական պաշտամունքի Գործերի Խորհրդի Նախագահ Ի. Վ. Պոլյանսկին:

## ՃԱՇԿԵՐՈՒՅԹ ՍՍՌՄ ԺՈՂԿՈՄՍՈՎԵՏԻՆ ԿԻՑ ԿՐՈՆԱԿԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ի. Վ. ՊՈԼՅԱՆՍԿՈՒ ԵՎ ՀՍՍՌ ԺՈՂԿՈՄՍՈՎԵՏԻՆ ԿԻՑ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ս. Ն. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՄՈՏ

Հունիսի 28-ին ՍՍՌ Միության Ժողկոմսովետին կից կրոնական պաշտամունքի գործերի Խորհրդի Նախագահ Ի. Վ. Պոլյանսկու և ՀՍՍՌ Ժողկոմսովետին կից հայ եկեղեցու գործերի Խորհրդի Նախագահ Ս. Ն. Հովհաննիսյանի մոտ տեղի ունեցավ ճաշկերույթ ի պատիվ արտասահմանից ժամանած հայ Եկեղեցական Ժողովի աշխարհիկ և հոգևոր պատգամավորների և հյուրերի: